



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Նյութ թիվ 0053/06/2010թ.
Նախագահող դատավոր՝ Գ.Արզումանյան

Նյութ թիվ 0053/06/2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«20» ապրիլի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով

Նախագահությամբ դատավոր՝
Մասնակցությամբ դատավորներ՝

Շ.Օհանյանի
Գ.Գրիգորյանի
Կ.Ղարայանի

դռնփակ դատական նիստում քննելով մեղադրյալ Արսեն Սուրենի Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 26-ի որոշման դեմ մեղադրյալ Արսեն Սուրենի Մակարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

ԼՂՀ Ոստիկանության քննչական վարչության հատուկ կարևորության գործերով /այսուհետ՝ ՔՎ ՀԿԳ/ բաժնի ավագ քննիչ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Ղազարյանի կողմից 2010թ. հունվարի 24-ին ձերբակալվել է «Պետրոլ Սերվիս» ՓԲԸ գլխավոր հաշվապահ Արսեն Սուրենի Մակարյանը:

ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի 2010թ. հունվարի 27-ի որոշմամբ Ա.Մակարյանը ներ է գրավվել որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի առաջին մասով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. հունվարի 27-ի որոշմամբ բավարարել է ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի

միջնորդությունը և մեղադրյալ Ա.Մակարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանքը՝ 1 /մեկ/ ամիս ժամկետով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. փետրվարի 19-ի որոշմամբ բավարարել է ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի միջնորդությունը Ա.Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին 1 /մեկ/ ամիս ժամկետով՝ մինչև 2010թ. մարտի 24-ը:

ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանը 2010թ. մարտի 13-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան միջնորդություն է ներկայացրել Ա.Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 /երկու/ ամսով երկարացնելու մասին:

Մեղադրյալ Ա.Մակարյանի պաշտպան Ա. Ապրեսյանը 2010թ. մարտի 18-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան միջնորդություն է ներկայացրել՝ խնդրելով կամ մերժել Ա. Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը, կամ կալանքը փոխարինել գրավով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. մարտի 18-ի որոշմամբ բավարարել է ԼՂՀ ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի միջնորդությունը, և Ա.Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացրել է 1 /մեկ/ ամիս ժամկետով՝ մինչև 2010թ. ապրիլի 24-ը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նույն որոշմամբ մեղադրյալ Ա.Մակարյանի պաշտպան Ա. Ապրեսյանի միջնորդությունը՝ կալանքը գրավով փոխարինելու մասին, մերժել է:

Մեղադրյալ Ա.Մակարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործի նյութերը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010թ. մարտի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց բավարարման:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մակարյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը բերվել է հետևյալ հիմքերով և հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 26-ի որոշումը ենթակա է բեկանման, իսկ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը՝ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 145-րդ, 146-րդ, 147-րդ և 148-րդ հոդվածները, 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Կալանավորումը՝ քրեական գործի քննության ընթացքում կիրառվող ամենախիստ խափանման միջոցն է, և պետք է կիրառվի այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ ոչ մի հիմնավորում չի ներկայացվել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմքի մասին, չի նշվել ազատությունը սահմանափակելու ոչ մի պատճառ: Միջնորդության մեջ միայն նշվել է կատարվելիք քննչական գործողությունների մասին, որոնք ըստ էության չեն կարող կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմք հանդիսանալ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանն առանց որևէ հիմնավորման մերժել է վերաքննիչ բողոքը, ուժի մեջ թողնելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ԼՂՀ ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 18-ի որոշումը, առանց հաշվի առնելու, որ ինքը /բողոք բերողը/ կատարել է ոչ մեծ ծանրության արարք, տվել է ինքնախոստովանական ցուցմունք և վերականգնել է իր կողմից պատճառված նյութական վնասը, որ հանցագործության կատարումից անցել է երկու տարուց ավելի ժամանակ, նա ունի մշտական բնակության վայր, մնալով ազատության մեջ չի խոչընդոտի գործով ճշմարտության բացահայտելուն, չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, չի կատարի նոր հանցագործություն, որ բնակության վայրից բնութագրվում է դրականորեն, նախկինում որևէ հանցավոր արարք չի կատարել, այսինքն, բացակայում են իրեն կալանքի տակ պահելու դատավարական հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալները խնդրում է բեկանել իր նկատմամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 26-ի որոշումը և մերժել ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի միջնորդությունը կամ կալանավորումը փոխարինել գրավով:

3.ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով նյութերը, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

Նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Մակարյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում ստորադաս դատարանները բավարարվել են միայն օրենքով նախատեսված կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումների շարադրանքով, և իրենց որոշումները չեն պատճառաբանել փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններով:

ԼՂՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի և բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք: Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրկելու անթույլատրելիության սկզբունքներից:

Նշված սկզբունքների հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակագրկվի:

Այսպիսով, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի

սահմանափակում, պետք է հիմնված լինեն նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա: Հետևաբար՝ մեղադրյալ Ա. Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել նյութերի փաստական սվյալներով:

Ընդ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

Համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի՝ խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասի՝ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1. վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2. կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3. տարիքը և առողջական վիճակը.

4. սեռը.

5. զբաղմունքի տեսակը.

6. ընտանեական դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7. գույքային դրությունը.

8. բնակության մշտական վայրի առկայությունը.

9. այլ էական հանգամանքներ:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ: Միննույն ժամանակ, քրեական դատավարության օրենսգրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի, անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորվի ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

Կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա՞ շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ՞ գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը:

Յուրաքանչյուր գործով կալանքի երկարացումը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ կան հասարակական շահի իրական պահանջների հատուկ հատկանիշներ, որոնք ինքնուրույնաբար, չվտանգելով անմեղության կանխավարկածը, գերակշռում են ԼՂՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակն ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: Սույն նյութերով պարզված է, որ ի խախտումն օրենքի նշված պահանջի, դատարան ներկայացրած Ա.Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչի 2010թ. մարտի 13-ի որոշման մեջ շարադրված են միայն հանցավոր գործողությունների նկարագրումը, գործով որոշակի քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը, այսինքն, միջնորդության մեջ բացակայում են ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի առաջին մասի, 147-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխան՝ խափանման միջոց կիրառելու հիմքը և անհրաժեշտության հիմնավորումը, ինչպես նաև միջնորդությանը կցված չեն միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը /իրավական ձևակերպումները տես՝ Սուրեն Միրզոյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելու և նրան կալանքից ազատելու մասին ՎԲ 003-1/07թ. նյութերով ԼՂՀ Գերագույն դատարանի վճռաբեկ ատյանի 2007թ. դեկտեմբերի 3-ի որոշման մեջ /:

Այսպիսով, Ա.Մակարյանի կալանքի ժամկետը երկարացնելիս ստորադաս դատարանները պարտավոր էին բավարար փաստերի ներքո հիմնավորված ճանաչել ԼՂՀ քրեական դատավարության 146-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքերի առկայությունը, բավարար չափով պետք է հիմնավորվեր տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո հիմնավորվել նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Նշված հոդվածի իմաստով, վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող ակտերը վերանայող դատարան, որի խնդիրն է նշված ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման կայացումը և դրանց՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են տարբեր դատավարական գործառնությունների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվում է մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության, իսկ նշված ակտերի՝ վերաքննիչ դատարանի կողմից վերանայումը՝ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման գործառնությի շրջանակներում:

Մինչդեռ սույն նյութերով նշված գործառնությը ԼՂՀ վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ չի կատարվել, չի ղեկավարվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածով և իրեն վերապահված լիազորության շրջանակներում պատշաճ ձևով չի ստուգել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, և անփոփոխ է թողել անհիմն որոշումը: ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը սույն նյութերով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ակնհայտ դատական սխալ, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է ճիշտ որոշում կայացնելու վրա և հիմք է հանդիսանում ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետով սահմանված լիազորության ուժով դատական ակտը բեկանելու համար:

Ինչ վերաբերում է բողոք բերողի՝ կալանքը գրավով փոխարինելու պահանջին, ապա ԼՂՀ Գերագույն դատարանն այդ մասով մերժում է վճռաբեկ բողոքը՝ կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:

ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն նյութերով առկա է ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի 2010թ. հունվարի 23-ի որոշումը՝ Մասիս Էդիկի Շամիրյանի, Արթուր Ռոբերտի Մինասյանի և Հրանտ Ռուբենի Հայրապետյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին: 2010թ. հունվարի 24-ին Ա.Մակարյանը ձերբակալվել է, իսկ քննիչի 2010թ. հունվարի 27-ի որոշմամբ ներ է գրավվել որպես մեղադրյալ: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ քննիչը լիազորված է իր վարույթում եղած գործի քննության ընթացքում հարուցել քրեական գործ, եթե հայտնաբերվել է նոր հանցագործության դեպք, որը կատարել է այլ անձ:

Մինչդեռ սույն նյութերով բացակայում է Ա.Մակարյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշում, ինչը հանդիսանում է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի պահանջների խախտում:

ԼՂՀ Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ Մ.Ղազարյանի կողմից թույլ տրված օրենքի այդ խախտումը ստորադաս դատարանների կողմից ուշադրության և գնահատման առարկա չի դարձվել:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

1. Մեղադրյալ Արսեն Մակարյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. մարտի 18-ի Արսեն Մակարյանին կալանքի տակ պահելու ժամկետը 1 /մեկ/ ամսով երկարացնելու մասին որոշումը և ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 26-ի Արսեն Մակարյանի վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումը վերացնել և Արսեն Մակարյանին կալանքից ազատել:

2. ԼՂՀ Ոստիկանության ՔՎ ՀԿԳ բաժնի ավագ քննիչ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Ղազարյանի 2010թ. մարտի 13-ի միջնորդությունը մերժել:

3. Վճռաբեկ բողոքը՝ կալանքը գրավով փոխարինելու մասով, մերժել:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Շ. ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ. ՂԱՐԱՅԱՆ**